

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

## Արմինե Մելիքսեթյան

*իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ ոստիկանության  
կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի  
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,  
ոստիկանության մայրը*

2011 թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2011 թ. մայիսի 25-ին: 48 հոդվածից բաղկացած այս օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին քրեական օրենսգրքի ինչպես Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասերում: Դեռևս 2003 թ. նոյմեմբերի 21-ին գրեթե նույնանման փոփոխություններ էին կատարվել նաև ՌԴ քրեական օրենսգրքում, որի նպատակն էր քրեական քաղաքականության լիբերալացումը, ինչը ենթադրում է համբերատար և հանդուրժողական վերաբերմունքի դրսևորում հանցանք կատարած անձանց նկատմամբ:

Նման փոփոխությունները պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ քրեական օրենսդրության որոշ հասկացություններ ամբողջական և հստակ չէին ձևակերպված, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք էին տալիս, որի հետևանքով տուժում էր օրենքի որակը, դրա կիրառման արդյունավետությունը: Այդպիսի հասկացություններից էր «հանցագործությունների կրկնակիությունը» մասնավորապես, որը իրավակիրառ պրակտիկայում կոլիզիա էր առաջանում ինչպես հանցագործությունների կրկնակիության և համակցության, այնպես էլ հանցագործությունների կրկնակիության և ռեցիդիվի ինստիտուտների միջև: Այսպես, հանցագործությունների կրկնակիության և համակցության միջև «բախումն» առկա էր մեկից ավելի նույնական կամ միասեռ հանցանքներ կատարելու դեպքում, երբ անձը դրանց համար չէր ենթարկվել քրեական պատասխանատվության, քանի որ այդ իրավիճակը կարող էր ձևավորել ինչպես կրկնակիություն, այնպես էլ համակցություն: Մյուս կողմից նախկինում դիտավորյալ հանցանքի համար դատվածություն ունեցող անձի կողմից նոր նույնաբնույթ դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում «կրկնակիություն» և «ռեցիդիվ» հասկացությունները նույնանում էին:

Մինչև 2011 թվականը կատարված օրենսդրական փոփոխությունները ՀՀ քր. օր.-ի 21 հոդվածի 1-ին մասը հանցագործությունների կրկնակիություն էր համարում քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը: Հոդվածի մեկնաբանությունից բխում էր, որ կրկնակիություն են կազմում միայն քր. օր.-ի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի ավարտված հանցագործությունները, իսկ հանցագործությունների նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ այն դեպքերը, երբ անձը մի հանցագործությանը մասնակցում է որպես կատարող, իսկ մյուսին որպես հանցակից, որոնց դեպքում հղում է կատարվում քր. օր.-ի Ընդհանուր մասի հոդվածներին, կրկնակիություն չեն կազմում: Դրա համար էլ, երբ կատարված հանցագործություններից մեկը չէր ավարտվում, կամ հանցագործություններից մեկում անձը մասնակցում էր որպես հանցա-

կից, կատարված արարքները որակվում էին հանցագործությունների համակցությամբ՝ զուգորդված կրկնակիության հետ, ինչը անարդարացիորեն վատթարացնում էր այն անձի վիճակը, որն իրականում պակաս հանրային վտանգավորություն էր ներկայացնում: Չէ՞ որ երկու ավարտված հանցանք կատարողն ավելի վտանգավոր է, քան մեկ ավարտված և մեկ չավարտված հանցանք կատարողը: Սա նույնպես վկայում էր կրկնակիության ինստիտուտի թերությունների մասին:

2011 թվականին կատարված արմատական փոփոխությունների շնորհիվ լուծվեց վերը նշված խնդիրների զգալի մասը: Սակայն ի հայտ եկան նաև որոշ նոր խնդիրներ՝ կապված նշված օրենքին հետադարձ ուժ տալու հետ: ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է քննարկվում այն հարցը, թե որ օրենքը պետք է համարել մեղմացնող. ա՞յն օրենքը, որը թույլ է տալիս պատասխանատվությունը մեղմացնել, թե՞ որը թույլ է տալիս պատասխանատվությունը չխստացնել: Որոշ հեղինակների կարծիքով, մեղմ օրենք է համարվում այն օրենքը, որը հնարավորություն է տալիս նշանակել ավելի մեղմ պատիժ՝ անկախ այն հանգամանքից, որ այն բարձրացնում է պատժի առավելագույն չափը<sup>1</sup>: Հեղինակների մյուս խմբի կարծիքով, մեղմ օրենք պետք է համարել այն օրենքը, որի դեպքում պատժի առավելագույն չափը ավելի ցածր է, քան հին օրենքով նախատեսված պատժի առավելագույն չափն է<sup>2</sup>:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի օրենքով (միայն հանցագործությունների բազմակիությանն առնչվող քրեաիրավական նորմերի մասով) հանցակազմերի ծավալը չի ընդլայնվում, ինչպես նաև չի փոխվում արարքի պատժելիությունը, սակայն այդ օրենքով փոփոխության են ենթարկվում արարքների գնահատման, ըստ այդմ՝ պատժի նշանակման կանոնները, որոնք մի դեպքում վատթարացնում են անձի վիճակը, մի դեպքում՝ բարելավում:

ՀՀ քրեական օրենսգրքում 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխությունների մեծ մասը վերաբերում է հանցագործությունների բազմակիության ինստիտուտին: Ընդ որում, այդ օրենքով ոչ միայն փոփոխվել են հանցագործությունների բազմակիության տեսակները, այլ նաև փոփոխվել և լրացվել է հանցագործությունների բազմակիության դեպքում պատիժ նշանակելու կարգը:

Նշված օրենքով օրենսդրորեն ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի «Հանցագործությունների կրկնակիություն» վերտառությամբ 21 հոդվածը: Այսինքն, եթե մինչ այդ հանցագործությունների բազմակիության տեսակներ էին համարվում հանցագործությունների կրկնակիությունը, հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը, ապա նոր օրենքով բազմակիության ձևերն են հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը: Միաժամանակ ընդլայնվեց հանցագործությունների համակցության բնորոշումը: Եթե օրենքի նախկին ձևակերպմամբ հանցագործությունների համակ-

<sup>1</sup> St`u Блум М. И., Тилле А. А., Обратная сила закона. М., 1969 թ., էջեր 54-55:

<sup>2</sup> St`u Сахаров А., Ответственность за деяния, совершенные до вступления в силу нового Уголовного кодекса РСФСР// Соц. Законность., 1961 թ., N 6, էջ 28: Якубов А. Е., Обратная сила более мягкого уголовного закона// Вест. Моск., ун-та., сер .11, Право. 1997 թ., N4, էջ 32:

ցություն էր համարվում քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել, կամ այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ապա գործող քրեական օրենսգրքի 20 հոդվածի նոր խմբագրությամբ հանցագործությունների համակցություն է համարվում քրեական օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել կամ այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:

Տառաջի մեկնաբանելով քրեական օրենսգրքի 20 հոդվածի նախկին և նոր խմբագրությամբ նորմը՝ կարելի է նշել, որ եթե քրեական օրենքի նախկին ձևակերպմամբ հանցագործությունների համակցություն էր համարվում միայն տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելը, ապա նոր խմբագրությամբ հանցանքների համակցություն է համարվում ցանկացած, այդ թվում *նույն հոդվածով* նախատեսված հանցանքների կատարումը, միայն թե մեկ պայմանով, որ անձը կատարված հանցանքներից ոչ մեկի համար չպետք է դատապարտված լինի:

Վերլուծելով հանցագործությունների համակցությունը բնորոշող ՀՀ քրեական օրենսգրքի 20 հոդվածի նախկին և նոր խմբագրությամբ նորմերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր իրավական դիրքորոշումն է հայտնել Ա. Արծրունու գործով կայացված 2013 թվականի փետրվարի 15-ի որոշման մեջ, որի 22-րդ կետի համաձայն՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20 հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում ամրագրված հանցագործությունների համակցությունը բնութագրվում է.

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշով, որոնք են՝

ա) տարաբնույթ, նույնական կամ համանման հանցանքներ կատարելը ,

բ) համակցություն կազմող հանցանքների համար դատված չլինելը,

գ) համակցություն կազմող առնվազն երկու հանցանքների կատարումից հետո դրանց քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքների, օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների պահպանումը,

դ) *նույնական հանցագործություններ կատարելու դեպքում՝ հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարված լինելու հատկանիշի բացակայությունը* (ընդգծումը մերն է՝ Ա. Մ.):

Լիովին համամիտ լինելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հետ, այնուամենայնիվ պետք է նշել, որ եթե կրկնակիության ինստիտուտի վերացումից հետո ՀՀ քրեական օրենսգրքում երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող նորմերի առկայությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը հաշվի է առել այս որակյալ հատկանիշի հանրային վտանգավորությունը և բացառել է, օրինակ՝ երկու կամ ավելի անձանց սպանության դեպքում արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ հանցագործությունների համակցության ընդհանուր կանոնով որակելու հնարավորությունը, այնուամենայնիվ գործող քրեական օրենսգրքի 20 հոդվածի մեկնաբանությունը չի արտացոլում օրենսդրի վերը նշված «ցանկությունը»: Ուստի կարելի է ՀՀ քրեական օրենսգրքի 20 հոդվածում սահմանել

այնպիսի դրույթ, համաձայն որի՝ եթե երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը քրեական օրենսգրքում որևէ հոդվածի մասում նախատեսված է որպես արարքը ծանրացնող հանգամանք, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է:

Փաստորեն, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման, «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո օրենսդիրը, ընդլայնելով հանցագործությունների իրական համակցության տեսակները, այնուամենայնիվ երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանք կատարելու համար պատասխանատվություն նախատեսող Հատուկ մասի համապատասխան նորմերից չի հրաժարվել: Այսինքն՝ առկա է օրենսդիրը հաշվի առնված համակցություն, երբ օրենսդիրը մեկից ավելի հանցանքի կատարումը նախատեսում է որպես հանցակազմի որակյալ հատկանիշ, որի պարագայում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված համապատասխան որակյալ հանցակազմով և ոչ թե հանցագործությունների համակցության կանոններով:

Սակայն կարծում ենք, որ երկու կամ ավելի անձի նկատմամբ միասնական դիտավորությամբ չընդգրկված երկու կամ ավելի արարքներին մեկ հոդվածով քրեաիրավական գնահատական տալու դեպքում կարող են առաջանալ մի շարք հարցեր:

Նախ՝ արդյո՞ք անձի արարքը հոդվածի մեկ մասով որակելու դեպքում նշանակում է, որ անձը կատարել է մեկ հանցագործություն: Բանն այն է, որ քրեական իրավունքի մի շարք ինստիտուտների կիրառման համար պահանջվում է պարզել՝ անձն առաջին անգամ է կատարել հանցանքը, թե՞ ոչ: Օրինակ գործուն զոջալու հիմքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում, բացի այլ պայմաններից, պահանջվում է նաև, որ հանցանքը կատարված լինի առաջին անգամ: Երկրորդ՝ խնդիրներ կարող են առաջանալ ոչ միայն անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս, այլ նաև տվյալ հանցագործությունների համար պատիժը կրելուց հետո նոր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում: Այսպես, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 22 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը: Պատկերացնենք իրավիճակ, երբ անձը 17 տարեկանում կատարում է մեկ անձի հասարակ սպանություն, իսկ երկու տարի անց, առանց նախորդ սպանության համար դատապարտման, կատարում է ևս մեկ անձի հասարակ սպանություն: Համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ կատարված երկու սպանությունները պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու կամ ավելի անձանց սպանություն) և պատիժ նշանակել ազատազրկման ձևով ասենք 15 տարի ժամկետով: Եթե պատիժը կրելուց հետո անձը կատարի նոր դիտավորյալ հանցանք, ապա ռեցիդիվը գնահատելիս կարող է խնդիր առաջանալ՝ հաշվել նախորդ դատվածությունը, թե՞ ոչ, իսկ հաշվի առնելու դեպքում, կարծում ենք, պետք է նկատի ունենալ, որ անձը նախկինում կատարել է ոչ թե երկու, այլ մեկ հանցանք:

Եթե խոսելու լինենք վերոնշյալ օրենքի հետադարձ ուժի մասին, ապա դժվար չէ նկատել, որ այդ օրենքում կան այնպիսի դրույթներ, նորմեր, որոնք բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը, և կան դրույթներ, որոնք՝ հակառակը:

Իսկ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի՝ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնա-

կիրեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիրեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:

Ինչպես արդեն նշվեց, փոփոխությունների են ենթարկվել ինչպես հանցագործությունների բազմակիության առանձին տեսակներին վերաբերող, հետևաբար արարքի որակմանն առնչվող, այնպես էլ հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգին վերաբերող դրույթներ, ինչպես նաև նախատեսվել է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման նոր կարգ:

2011 թվականի նույն օրենքով փոփոխությունների է ենթարկվել ոչ միայն հանցագործությունների համակցության բնորոշումը, այլ նաև հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգը: Համեմատելով հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու նախկին և ներկա կարգը՝ կարելի է նկատել, որ ի տարբերություն նախկին կարգի, որը թույլ էր տալիս հանցանքների համակցությամբ վերջնական պատիժը որոշել ինչպես կլանման, այնպե՛լ էլ մասնակի և լրիվ գումարման կանոններով, նոր օրենքի պայմաններում դատարանները վերջնական պատիժը կարող են որոշել միայն պատիժների գումարման (լրիվ կամ մասնակի) սկզբունքը կիրառելով, ինչը հավասար պայմաններում ավելի խիստ պատիժ է նախատեսում: Հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու կարգը նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի նախկին ձևակերպմամբ ոչ մեծ ծանրության հանցանքների դեպքում վերջնական պատիժը չէր կարող գերազանցել հանցանքներից առավել ծանրի համար նախատեսված առավելագույն պատիժը, իսկ գործող կարգի համաձայն, եթե համակցության մեջ ընդգրկված են միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարի ժամկետով ազատազրկումը: ՀՀ քրեական օրենսգրքի 19 հոդվածի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզուգույնությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Օրենքի նախկին ձևակերպմամբ՝ բռնություն գործադրելով բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար ազատազրկման ձևով պատիժը չէր կարող գերազանցել 2 տարի ժամկետով ազատազրկումը, իսկ գործող կարգի համաձայն՝ կարող է նշանակվել մինչև 5 տարի ժամկետով ազատազրկում (տվյալ դեպքում՝ առավելագույնը 4 տարի ժամկետով ազատազրկում, քանի որ բռնություն գործադրելով բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 147 հոդվածի 2-րդ մասի սանկցիան սահմանում է առավելագույնը 2 տարի ժամկետով ազատազրկում): Այսինքն՝ կարելի է փաստել, որ օրենքի այդ դրույթը վատթարացնում է հանցանք կատարած անձի վիճակը, և օրենքի այդ մասը չունի հետադարձ ուժ:

Փոփոխության չի ենթարկվել միջին ծանրության կամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների դեպքում վերջնական պատիժ որոշելու կարգը: Այսպես, ինչպես նախորդ, այնպես էլ ներկա ձևակերպմամբ, եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության կամ միջին ծանրության և ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում՝ ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 10 տարին:

Սակայն հանցագործությունների կրկնակիության ինստիտուտը, հետևաբար նաև արարքը կրկին կատարելը որպես ծանրացնող հանգամանք վերանալուց հետո նման կարգով պատիժ նշանակելը կարող է վատթարացնել հանցանք կատարած անձի վիճակը: Օրինակ, եթե նախկին ձևակերպմամբ անձի կողմից չորս անգամ խոչոր չափերով գողություն կատարելու և դրանից ոչ մեկի համար դատապարտված չլինելու դեպքում վերջնական պատիժը չէր կարող գերազանցել 6 տարի ժամկետով ազատազրկումը, ապա գործող կարգի պայմաններում կարող է նախատեսվել մինչև 10 տարի ժամկետով ազատազրկում:

2011 թվականի կատարված փոփոխություններով խստացվել է նաև հանցանքների համակցության դեպքում պատիժ նշանակելու այն կարգը, երբ համակցություն են կազմում ծանր և առանձնապես ծանր հանցանքները: Եթե նախկին ձևակերպմամբ տվյալ դեպքում վերջնական պատիժը չէր կարող գերազանցել 15 տարի ժամկետով ազատազրկումը, ապա գործող կարգի համաձայն՝ վերջնական պատիժը չի կարող գերազանցել 25 տարի ժամկետով ազատազրկումը:

Նույն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել բռնաբարության այն ծանրացնող հանգամանքը, որը պատասխանատվություն էր նախատեսում նախկինում բռնաբարություն և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարած անձի կողմից բռնաբարություն կատարելու համար, այն պայմաններում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածը չունի այնպիսի ծանրացնող հանգամանք, որը պատասխանատվություն է նախատեսում երկու կամ ավելի անձանց նկատմամբ բռնաբարություն կատարելու համար: Հետևաբար հարց է առաջանում. եթե մինչև օրենքի փոփոխությունը բռնաբարություն կատարած անձի կողմից կրկին բռնաբարություն կատարվի, և անձը չդատապարտվի, ինչպե՞ս պետք է որակվի նրա արարքը գործող օրենքի պայմաններում՝ հաշվի առնելով հետադարձ ուժի կանոնը: Գործող օրենքի պայմաններում տվյալ անձի կողմից կատարված երկու բռնաբարությունները համարվում են հանցագործությունների իրական համակցություն, որի դեպքում պատիժ նշանակելու գործող կարգի պայմաններում կարող է նշանակվել մինչև 12 տարի ժամկետով ազատազրկում, այնինչ նախկին օրենքով նրա կողմից կատարված արարքը կորակվեր որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված բռնաբարություն, որի համար կարող է նշանակվել առավելագույնը 10 տարի ժամկետով ազատազրկում: Հետևաբար կատարվածը չենք կարող որակել հանցանքների համակցությամբ, քանի որ դրանով կվատթարանա հանցանք կատարած անձի վիճակը, միևնույն ժամանակ հետադարձ ուժ պետք է տրվի օրենքի այն մասին, որով վերացել է նախկինում բռնաբարություն կատարած անձի կողմից բռնաբարություն կատարելու ծանրացնող հանգամանքը, ուստի անձի կատարած արարքը պետք է որակել որպես հասարակ բռնաբարություն, որի համար ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածի 1-ին մասով նախատեսված է երեքից վեց տարի ժամկետով ազատազրկում:

Այս առումով տեղին է մեջ բերել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, որն արվել է Ս. Հակոբյանի վերաբերյալ 2012 թվականի դեկտեմբերի 5-ին կայացված որոշման մեջ, համաձայն որի՝ մինչև նշված օրենքի ուժի մեջ մտնելը անձի կողմից երկու առանձնապես ծանրացնող հանգամանքներում կատարված խարդախությունները գործող օրենսգրքի պայմաններում պետք է որակվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3 -րդ մասի 1-ին կետով, չնայած ըստ էության առկա է հանցագործությունների համակցություն, սակայն կատարված երկու խարդախությունները հանցանքների համակցությամբ որակելու և հետևաբար հանցագործությունների համակցության կարգով պատիժ նշանակելով՝ կվատթարանա հանցանք կատարած անձի վիճակը:

Այսպիսով, քանի որ օրենսդրական փոփոխությունները պետք է միտված լինեն օրենսդրական բացերի լրացմանը, նորմերի միջև եղած հակասությունների վերացմանը, օրենքի միատեսակ կիրառման ապահովմանը, ապա վերոնշյալ օրենքով լուծվել է թվարկված խնդիրների զգալի մասը, սակայն, կարծում ենք, մեկ նորմատիվ-իրավական ակտով միաժամանակ քրեական օրենսգրքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, ինչը մասամբ կարող է դժվարացնել դրա կիրառման պրակտիկան<sup>1</sup>:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ, СВЯЗАННЫХ С МНОЖЕСТВЕННОСТЬЮ ПРЕСТУПЛЕНИЙ

**Армине Меликсетян**

*Доцент кафедры уголовного права и криминологии  
Академии Образовательного комплекса Полиции РА,  
майор полиции, кандидат юрид. наук*

Действующий Уголовный Кодекс РА вступил в силу 1-ого августа 2003 года. За этот период были внесены некоторые изменения и дополнения в Общую и Особенную части УК.

В Общую часть Уголовного кодекса были внесены изменения, которые диктуют другие правила, по сравнению с существующими, касающиеся применения уголовно-правовых норм.

25 мая 2011 года вступил в силу Закон об изменениях и дополнениях в Уголовном кодексе Республики Армения. Законодательным путем была отменена статья 21 УК под названием «Повторность преступлений», а также расширилось понятие совокупности преступлений.

Такие изменения были связаны с тем, что в уголовном законодательстве во время определения любого уголовного-правового понятия должны соблюдаться законодательные технические требования.

Понятие должно быть как можно более полным и четким, не порождать различные толкования, поскольку от качества закона зависит эффективность правоприменительной деятельности.

Отсутствие четкого определения качественных признаков повторности преступления породило некоторые трудности в понимании повторности преступления.

Это приводит к тому, что создается коллизия между повторностью преступлений и совокупностью преступлений, а с другой стороны – повторностью преступлений и рецидива преступлений.

Вышеупомянутые проблемы в основном были решены в 2011 году в результате законодательных изменений.

Тем не менее, некоторые проблемы возникли в связи с обратной силой закона.

<sup>1</sup> Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մի շարք քրեական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային որոշումներ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են նշված օրենքի կիրառմանը:

## SOME ISSUES ON LEGISLATIVE AMENDMENTS RELATED TO CRIMES PLURALITY

**Armine Meliksetyan**

*Associate professor of the Chair of Criminal Law and Criminology the Academy of Educational Complex of the Police of the RA, Police Major, Candidate of Legal Sciences*

---

The RA Criminal Code took effect on August 1, 2003. The RA Criminal Code has been changed and amended during this period. Numerous amendments have been introduced both into the General part of the Criminal Code and the Special part. Core and axial amendments have been introduced especially in the General part of the Code, which dictated other rules of the application of criminal-legal norms essentially different from the rules existing before.

The RA law "On the Introduction of Amendments into the RA Criminal Code" was adopted by the RA National Assembly on May 23, 2011, which took effect on May 25, 2011. Such amendments have also been conditioned by the circumstance that all the requirements of the legislative technique should be preserved in case of the introduction of any criminal-legal notion in the Criminal Code. The notion should be complete and exact as far as possible, and should not give place to different comments, because the effectiveness of its application depends on the quality of the law. The absence of an exact definition of the qualitative feature of repeated crimes raised some problems in the apprehension of the notion of repeated crimes.

This brought to the fact that collision raised between the repeated crimes and cumulative crimes, on the one hand, and between the repeated crimes and repeated commission of crimes, on the other hand. The considerable part of the abovementioned problems has been solved as a result of the radical changes that took place in 2011. But some problems connected with the retroactivity of the mentioned law have also appeared.

**Բանալի բառեր** – քրեաիրավական նորմեր, հանցագործությունների բազմակիություն, հանցագործությունների կրկնակիություն, հանցագործությունների համակցություն, հանցագործությունների ռեցիդիվ, օրենքի հետադարձ ուժ:

**Ключевые слова:** Уголовно-правовые нормы, множественность преступлений, повторность преступлений, совокупность преступлений, рецидив преступлений, обратная сила закона.

**Key words:** Criminal-legal norms, crimes plurality, repeated crimes, cumulative crimes, repeated commission of crimes, retroactivity of law.